ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Քիմիական գիտություններ XVII, № 3, 1964 Химические науки

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՄԻՏՐԻԵՎԻՉ ՊԵՏՐՈՎ

1964 թ. հունվարի 31-ին ծանր, երկարատև հիվանդությունից հետո Մոսկվայում վախճանվեց խոշոր օրգանիկ-քիմիկոս, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ պրոֆեսոր, դոկտոր, Պետական մրցանակի լաուրեատ Ալեքսանդր Դմիտրիևիչ Պետրովը։

Ա. Դ. Պետրովը ծնվել է 1895 թ. օգոստոսի 15-ին Պետերբուրգում։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ուսանող Պետրովը զորակոչվում է բանակ և մասնակցում պատերազմին ռուս-տաճկական ռազմաճակատում։ 1918 թ. նա կամովին մըտնում է Կարմիր բանակի շարքերը և գտնվելով բանակային ծառայության մեջ, 1922 թ. ավարտում է Պետերբուրգի համալսարանը, դրանից հետո նրա ողջ կյանքը կապված է եղել գիտահետազոտական և մանկավարժական աշխատանքի հետ։ Սկսած 1925 թ. մինչև կյանքի վերջը Ա. Դ. Պետրովը աշխատում էր ՍՍՌՄ ԳԱ, սկզբում Լենինգրադում՝ բարձր ճնշումների լաբորատորիայում, իսկ 1934 թվականից Մոսկվայում օրգանական քիմիայի ինստիտուտում որպես պիրոգենային պրոցեսների (հետագայում՝ ածխաջրածինների) լաբորատորիայի վարիչ։ Ա. Դ. Պետրովի առաջին գիտական աշխատանքների ցիկլը կապված է ալիֆատիկ շարքի ածխաջրածինների, կետոնների և թթուների կատալիտիկ փոփոխությունների հարցերի հետ։ Մի խումբ աշակերտների հետ միասին 15 տարիների ընթացքում նա ծավալուն հետազոտություններ է կատարել մոտորային վառելիքների ու նավթի քիմիայի բնագավառում, ուսումնասիրելով վառելիքների դեստրուկտիվ հիդրոգենիզացիայի ու վոլտոլային լուղերի գոյացման քիմիզմը, մեթանի կրեկինգից ստացվող ացետիլեն-ջրածնային խառնուրդների կատալիտիկ հիդրումն ու պոլիմերացումը, անհատական ածխաջրածինների ստացումը և այլն։ Այդ աշխատանքների համար 1947 թ. Պետրովը պարգևատրվել է Պետական մրցանակով։

Պատերազմական թվականների վերջին, շարունակելով ածխաջրածինների բնագավառում կատարվող հաջող ուսումնասիրությունները, Ա. Դ. Պետրովը մեծ եռանդով սկսեց զբաղվել օրգանական քիմիայի նաև մի նոր բնագավառով՝ սիլիցիում-օրգանական միացությունների քիմիայով և ստեղծեց այդ բնագավառում աշխատող իր աշխատակիցների մի կուռ կոլեկտիվ, որը առա-

շատար դեր գրավեց երկրում սիլիցիում-օրգանական մոնոմերային միացությունների քիմիայի բնագավառում։

Վերջին տարիների ընթացքում Ա. Դ. Պետրովն իր աշխատակիցների հետ միասին մեծ աշխատանք կատարեց լվացող նյութերի սինթեզի գիտական հիմունքներ ստեղծելու ուղղությամբ, առաջարկեց ալիֆատիկ թթուներ, սպիրտներ և ամիններ ստանալու օրիգինալ եղանակ։ Նրա գիտական հետաքրքրությունները սերտ կերպով կապված էին քիմիական արդյունաբերության հետ, նրա մի շարք աշխատանքները ներդրվել են արդյունաբերության մեջ։

Ա. Դ. Պետրովի գրչին են պատկանում ավելի քան 500 գիտական աշխատություն և 13 մենագրություն ածխաջրածինների սինթեզի և կատալիտիկ փոխարկությունների, մոտորային վառելիքների վերաբերյալ, օրգանական արդյունաբերական սինթեզի զարգացման պրոբլեմների, սիլիցիում-օրգանական միացությունների վերաբերյալ, 3 մենագրություն նվիրված բույսերի քիմիական պաշտպանությանը։

Մեծ է Ա. Դ. Պետրովի վաստակը գիտական կադրերի և արդյունաբերության համար ինժեներներ պատրաստելու գործում։ Երկար տարիներ նա եղել է Մոսկվայի Դ. Ի. Մենդելևի անվան քիմիատեխնոլոգիական ինստիտուտի նավթաքիմիական սինթեզի ամբիոնի վարիչ, իսկ վերջին տարիներս՝ ամբիոնի պրոֆեսոր, Գորկու համալսարանի ամբիոնի վարիչ, ստեղծել է գիտական մեծ շկոլա, դաստիարակել է մոտ 70 թեկնածու և դոկտոր, որոնք աշխատում են երկրի բազմաթիվ գիտական կենտրոններում։

Ա. Դ. Պետրովը երկար տարիների ընթացքում եղել է ՍՍՌՄ ԳԱ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ֆիլիալների խորհրդատուն և աջակցող օգնություն է ցույց տվել ինչպես այդ, նույնպես և այլ ռեսպուբլիկաների քիմիական ինստիտուտներին և քիմիկոսներին իր մշտական խորհուրդներով և որակյալ քիմիկոսների կադրեր պատրաստելով։

Ա. Դ. Պետրովը մեծ աշխատանք էր կատարում որպես բարձրագույն ատեստացիոն կոմիտեի էքսպերտային հանձնաժողովի անդամ, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Պետական կոմիտեի մի շարք գիտական խորհուրդների, գիտա-հետազոտական աշխատանքների կոորդինացման և քիմիայի կոմիտեի անդամ, որպես մի շարք ճյուղային գիտական հիմնարկների խորհրդատու։

Ա. Դ. Պետրովի աշխատանքները ճանաչում են գտել նաև մեր երկրի սահմաններից դուրս. նա ֆրանսիական, գերմանական և ամերիկյան քիմիական ընկերությունների անդամ էր և մի շարք միջազգային կազմակերպությունների տշխատանքների ակտիվ մասնակից։ ՍՍՌՄ կառավարությունը բարձր է գնահատել Պետրովի ծառայությունները և պարգևատրել էր Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով։

Ա. Դ. Պետրովի՝ որպես մարդու, քաղաքացու, գիտնականի և ուսուցչի պայծառ հիշատակը երկար կապրի նրան ճանաչողների սրտերում։

Վ. Դ. ԱԶԱՏՅԱՆ